

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2022-9-2-Ա

ք. Երևան

14.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի հունիսի 16-ին Գարեգին Ռեվազյանի կողմից ներկայացված՝ «Մարտին սթար» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան, Աշտարակի խճուղի 9/1, AM) «От Мартина Сендвич» (№20211720) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրահայտ ճանաչված «Сендвич» («Գրանդ Քենդի» ՍՊԸ, N 64, 01.08.2020թ.) համակցված ապրանքային նշանին: Տվյալ դեպքում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի «Сендвич» բառային տարրն ամբողջությամբ ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ, որն էլ սպառողին մոլորության մեջ կարող է գցել և պատճառ դառնալ խնդրարկված ապրանքների և Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ համարվող ապրանքային նշանի իրավատիրոջ՝ «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության միջև կապ ենթադրելու, հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին կամ անհիմն առավելությունների կհանգեցնի հանրահայտ ապրանքային նշանի համբավի շնորհիվ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու վերաբերյալ: Սակայն խորհրդի անդամի Ա. Բաբայանի կողմից ներկայացվեց այլ կարծիք բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ

մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրահայտ ճանաչված «Сендвич» («Գրանդ Քենդի» ՍՊԸ, No64, 01.08.2020թ.) համակցված ապրանքային նշանին: Տվյալ դեպքում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի «Сендвич» բառային տարրն ամբողջությամբ ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ, որն էլ սպառողին մոլորության մեջ կարող է գցել և պատճառ դառնալ խնդրարկված ապրանքների և Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ համարվող ապրանքային նշանի իրավատիրոջ՝ «Գրանդ Քենդի» ՍՊ ընկերության միջև կապ ենթադրելու, հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին կամ անհիմն առավելությունների կհանգեցնի հանրահայտ ապրանքային նշանի համբավի շնորհիվ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողը համաձայն չէր խորհրդի ներկայացրած ընդհանուր կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն:

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Գարեգին Ռեվազյանի կողմից ներկայացված «Մարտին սթար» ՍՊԸ ընկերության «От Мартина Сендвич» (No20211720) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ